ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/46

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Անգա-Տրանս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Անգա-Տրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Պապյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/57» ծածկագրով գնանշման հարցում, ուսադիրների և բարձերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-21-7/57-2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1808-2022 գրությամբ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.01.2022թ.-ի թիվ ՊՆ/02/338-2022 գրության հիման վրա, 02.02.2022թ.-ին «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 02.02.2022թ.-ին:

04.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/46 համարի ծածկագիրը:

16.02.2022թ.-ին և 04.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.03.2022թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.01.2022թ.-ի թիվ ՊՆ/02/338-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-7/57-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 21-ին միակողմանի լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 24.01.2022թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/57» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Անգա-Տրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1808-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 14.02.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՅ-ԼՕ-2022/46 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ Պաշտպանության նախարարության և <<Անգա Տրանս>> ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-7/57-2 պայմանագրով <<Անգա Տրանս>> ՍՊԸ-ն պարտավորվել է 2021թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ. արտադրելու և գնման ժամանակացույցի համաձայն ՀՀ ՊՆ-ին մատակարարելու ուսադիր՝ ավագ ենթասպայի գրասենյակային 200 զույգ և ուսադիր՝ ենթասպայի գրասենյակային 500 զույգ,

որոնք չմատակարարելու պատճառով ՀՀ ՊՆ-ն 21.01.2022թ. միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Հիշյալ՝ համապատասխանաբար 200 և 500 զույգ ուսադիրները չեն մատակարարվել ՊՆ համապատասխան ստարաբաժանման թերացման պատճառով՝

Բանն այն է, որ հիշյալ պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում լիարժեք հստակ չի նկարագրված արտադրվելիք վերը նշված 2 տեսակների ուսադիրների գույնային երանգները և արտաքին զարդանախշերը: Այդ անհստակությունը ճշգրտելու նպատակով մեր կողմից պահանջվել է տրամադրել պահանջվող գույնի և զարդանախշերի ժապավենների կամ ուսադիրների նմուշ, որպեսզի ճիշտ նույնությամբ պատվիրենք ուսադիրների ժապավեններ արտադրող գործարանին: Թիկունքի վարչութունից մեզ հայտնել են, որ նոր զարդանախշեր կրող ուսադիրի նմուշ չունեն, քանի որ դա նոր զարդանախշերով արտադրատեսակ է, միայն տրամադրել են էլեկտրոնային փոստով ուղարկված նկարները, որոնք մեր կողմից արտատպվել և նկարները կրկին էլեկտրոնային փոստով ուղարկվել է Բելոռուսի Մոգիլյով քաղաքի <<Լենտա>> գործարանին: Գործարանում պատրաստվել և մեզ է ուղարկվել ուսադիրի ժապավենների նոր նմուշ, որի վրա ճշգրտորեն արտացոլված է պահանջվող զարդանախշերը: Նմուշը ուղարկվել է ՊՆ Թիկունքի վարչության հաստատմանը: Վերջինիս ղեկավարությունը չի հաստատել նմուշը, պատճառաբանելով, որ ուսադիրի գույնը ճիշտ է դեղնականաչավուն գույնի է, սակայն չի համապատասխանում իրենց պահանջած երանգին:Այսպես 3 անգամ նմուշը ուղարկվել է գործարան, մեր կողմից ուսադիրը արտադրվել է, որը սակայն դարձյալ չի հաստատվել:

Բացի այդ, առարկություն է ներկայացվել գործվածքի խտության վերաբերյալ, որի մասին ոչ տեխնիկական բնութագրում և ոչ էլ ՊՆ-ի կողմից բանավոր մեզ չի տեղեկացվել: Հավանություն տալով զարդանախշերի տեսքին, առարկություն է ներկայացվել զարդանախշերի՝ ընդհանուր գործվածքի մակերևույթից բարձր լինելու վերաբերյալ, պահանջելով, որ զարդանախշերը լինեն ընդհանուր մակերևույթից ցածր, այսինքն՝ փորագրվածի պատկերով:

Թիկունքի վարչության ղեկավարության հիշյալ պահանջները նշված չեն ոչ տեխնիկական բնութագրում, ոչ էլ մեզ ուղարկված լուսանկարում:

Կոնկրետ նմուշի չտրամադրման պատճառով <<Անգա-Տրանս>> ՍՊԸ-ն հայտվել է ցայտնոտային և անելանելի դրության մեջ, քանի որ ամեն անգամ պատվիրման և տեղափոխման ծախսեր կատարելով, նմուշները ստանալուց հետո դրանց վրա կարելի է

<<հայտնաբերել>> ցանկացած ենթադրյալ անհամապատասխանություն (երանգի, զարդանախշի երանգի, խորության, լայնքի և այլն), այն դեպքում, երբ մեզ պատվեր իջեցնելիս ձեռքի տակ պետք է ունենային արդեն իսկ պատրաստի նմուշ, այն տրամադրեին մրցույթը շահած արտադրող ձեռնարկությանը, կոնկրետ այս դեպքում մեզ, մենք այն կուղարկեինք ժապավեն արտադրող միակ ձեռնարկությանը և կստանայինք իրենց ցանկալի ժապավենները և կարող էինք արտադրել իրենց ցանկացած ուսադիրները: Պետք է նշել, որ նախորդ տարի ևս ուսադիրները մենք ենք արտադրել և մատակարարել, դարձյալ նոր տեսակի էր, որի նմուշը մեզ տրամադրվել էր ՊՆ համապատասխան կառույցի կողմից, որից այս տարվա համար արդեն իսկ ներկրված ժապավեն ունեինք, բայց քանի որ այս տարի երանգի և անհասկանալի է թե դարձյալ ինչի փոփոխություն է եղել, ուստի մենք կրկին գրավոր խնդրել ենք արագ կարգով մեզ տրամադրել ժապավենի նմուշը, մենք ժապավեն արտադրող <<Լենտա>> Ընկերության հետ բանավոր պայմանավորվածություն ունեինք, որ ժապավենի նմուշը ձեռքի տակ ունենալու դեպքում պահանջվող քանակությունը արագ կարտադրվի և փոստով կուղարկվի մեզ,սակայն ՊՆ համապատասխան կառույցի կողմից դարձյալ ձգձգվել է ուսադիրների նմուշների տրամադրումը:

Մենք հարկադրված 19.07.2021թ. N Ա-018, 19.11.2021թ. N Ա-051 գրություններով ՀՀ ՊՆ թիկունքի վարչության պետ Ռ. Մարգարյանին, 18.11.2021թ. N Ա-050 գրությամբ ՀՀ Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ Հ. Վարդանյանին հայտնել ենք ստեղծված իրավիճակի մասին, խնդրելով գործուն միջոցներ ձեռնարկել ուսադիրների նմուշները մեզ տրամադրելու հարցում:

Հավանաբար նրանց միջամտության արդյունքում 2021թ. Դեկտեմբեր ամսվա սկզբներին նոր միայն մեզ տրամադրվել է ուսադիրների նմուշներ, որոնք անհապաղ ուղարկել ենք <<Լենտա>> գործարան:

Մեր խնդրանքով և լրացուցիչ վճարումներ կատարելու շնորհիվ ուսադիրների ժապավենները արդեն պատրաստ են, սակայն մենք չենք շտապում դրանք ներկրել, քանի որ պայմանագրերով նախատեսված մատակարարման ժամկետները արդեն իսկ ոչ մեր մեղքով ավարտվել են, ինչպես նաև 2021թ. Դեկտեմբերի 6-ին ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որին հրավիրված էին բոլոր մատակարարները: Թիկունքի վարչության ղեկավարությունը պաշտոնապես հայտարարել է, որ 2021թ. Դեկտեմբերի 10-ին ավարտվում է բոլոր տեսակի մատակարումների ժամկետները, որից հետո այլևս ՊՆ թիկունքի վարչությունը ապրանքներ չի ընդունելու:

1. <<Գնումների մասին >> ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն ..... մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ <<պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները >>:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում <<Անգա Տրանս>> ՍՊԸ-ի գործողություններում բացակայում է մեղքը: Ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել 2 կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է Պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել Պարտապանի պատասախանատվությքն չափը, եթե Պարտատերը դիրավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը, կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ Պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվությունէ կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Անգա Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը դիրքորոշմանը կից ներկայացրել է ՊՆ թիկունքի վարչության պետ Ռ. Մարգարյանին 19.07.2021թ. ուղարկված N Ա-018, 19.11.2021թ. ուղարկված N Ա-051 գրությունների, ՀՀ զինվարական դատախազության պետական շահերի պաշտպանության

բաժնի պետ Հ. Վարդանյանին 18.11.2021թ. N Ա-050 գրությունների և փոտային առաքման անդորրագրի պատճենները «5» թերթից:

4. <u>ՍՑ-LO-2022/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-7/57-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝

1. Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

- Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս:

- Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.-ը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 24.01.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՊՆԱ/2-89 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-7/57-2» գնման պայմանագրի շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ն 2021թ.-ի 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.-ը պետք է մատակարարեր ուսադիր ավագ ենթասպայի գրասենյակային 200 զույգ, ուսադիր ենթասպայի գրասենյակային 500 զույգ, որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ.-ի հունվարի 21-ին միակողմանի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1808-2022 գրությամբ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ

ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ուսադիրների և բարձերի, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ բաժնի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ուսադիրների և բարձերից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ուսադիրների և բարձերից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-7/57-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 24.01.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՊՆԱ/2-89 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից պայմանագրով սահմանված ապրանքները չի մատակարարվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման փաստական և իրավական հանգամանքներին, որով վերջինս փաստում է, որ պայմանագրով ստանձնած պաևրտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի կողմից նմուշի չտրամադրման պատճառով, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ՝

Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

- Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս:

- Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ-վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ամբողջ վերոգրյալների հաշվառմամբ՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մեկ օրինակ նմուշի տրամադրման պարտականությունը դրված է եղել ոչ թե Պատվիրատուի, այլ՝ Մասնակցի վրա, որպիսի պայմաններում Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներն անհիմն են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2022թ.-ի թիվ 26/26-1/1808-2022 գրությամբ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/46 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**